ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«23» Դեկտեմբերի 2014 թվականի N 100-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ 2015Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի պահանջներով. *ավագանին որոշում է՝*

2015թ. համար սահմանել տեղական տուրքեր և վճարներ հետևյալ դրույքաչափերով՝

1. Տեղական տուրքեր.

1.1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

<u>Հիմնական օբյեկտների համար</u>

ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:
բ) Սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.
բա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:
բբ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

բգ) 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:
բդ) 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:
դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1.1. կետով սահմանված նորմերը:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

1.4 Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամյակի համար՝ 3.000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամյակի համար՝ 3.000 դրամ:

1.5 Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 1քմ-350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական, կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ:

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 5000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:

1.6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 դրամ:

1.7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ:

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ:

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ:

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ:

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ:

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

1.8 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառ. մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս, արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս), արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

1.9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:

1.10.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 80000 դրամ:

1.11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 15000 դրամ:

2. Տեղական վճարներ

2.1 Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել՝ 10000 դրամ:

2.2.Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝5000դրամ:

2.3 Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 10000 դրամ:

2.4. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել.

2.4.1.Կենցաղային աղբի համար՝

ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 180 դրամ

2.4.2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանել՝ 2700 դրամ
բ)ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար սահմանել՝ 8000 դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 01.01.2015թ.:

4.ՈՒժը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի ավագանու 24.12.2012թ. N75-ա և 19.11.2013թ.N57-Ն որոշումները:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

			ԿՈՂՄ ( )	ԴԵՄ ( )	ՁԵՌՆՊԱՀ ( )
1.	Պապիկ	Աբգարյան			
2.	Վաչագան	Աբգարյան			
3.	Հրաչ	Ավետյան			
4.	Նվեր	Գաբրիելյան			
5.	Անդրանիկ	Գևորգյան			
6.	Գևորգ	Գևորգյան			
7.	Սուրեն	Զախարյան			
8.	Հակոբ	Խուդիկյան			
9.	Նորայր	Հակոբյան			
10.	Աբրահամ	Շահվերդյան			
11.	Գարիկ	Սավադյան			
12.	Գևորգ	Ստեփանյան			
13.	Էդմոնդ	Ստեփանյան			

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՍԱՇԱ ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. դեկտեմբերի 23

ք. ՄԱՍԻՍ